

ЗАЛА  
ШКАФЪ

ПОЛКА №

22

# ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՕՆԻ

Բ. ՏԱՐԻ

397

„Եւ ուսուցիչ որդւոց ձերոց  
խօսել զսոսա ի նստել ի տան.  
եւ ի գնալ ի ճանապարհի եւ  
ի ննջել եւ ի չառնել“:

V. Մովս. Ժա. 19.

ՀԱՄԱՁԱՅՆ ԺՐԱԳՐԻ ՀՈԳԵՒՈՐ ԻԺԵՂՆՈՒԹԵԱՆ

ԵՐՐՈՐԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ ա զ ժ ե ց

ՍԱՀԱԿ ՔԱՀ. ՍԱՀԱԿԵԱՆՅ

(Միաբան Մոզնէոյ Ս. Գեորգ եկեղեցւոյ)

Յարմար է կրօնաւայցներին ձեռքի տակ ունենալ իմ  
«Դատադիրք կրօնի» հատոր II. մասն ա. եւ ք.

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՅԻ

1893

2(075)  
U-15

22



Апр.  
2-630<sup>6/2a</sup>

2(075)  
U-15

44626



mf

## ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՕՆԻ

Բ. ՏԱՐԻ

„Եւ ուսուսջիք որդւոց ձերոց  
խօսել զտառ ի նստել ի տան.  
եւ ի գնալ ի ճանապարհի եւ  
ի ննջել եւ ի չառնել“:

V. Մարտ. Ժա. 19.

ՀԱՄԱՁԱՅՆ ԺՐԱԳՐԻ ՀՈԳԵՒՐԻ ԻԾԽԱՆՈՒԹԵԱՆ

ԵՐՐՈՐԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ ա զ ձ ե ց

ՍԱՀԱԿ ՔԱՀ. ՍԱՀԱԿԵԱՆՅ

(Միաբան Մոզնույ Ս. Գէորգ եկեղեցւոյ)

Յարմար է կրօնաւոյցներին ձեռքի տակ ունենալ իմ  
«Դասագիրք կրօնի» հատոր II. մասն ա. եւ ք.

ИНВ. № 17543

ТИФЛИСЬ

Типография И. А. Мартirosiанца, Орбеліан: ут., д. № 1-2.

1893

200 W

2010



Дозволено цензурою Гифлисъ 18-го Августа 1893 г.




29605-63

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

ՏԵՂԱԿԱԼԻ ԿԱԹՈՒՂՈՍՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԲԱՐՁՐԱՐԲԱԶԱՆ Ե Ր Ե Մ Ի Ա ԵՊԻՍԿՈՊՈՍԻ





## ՅԱՆԿ

§

|                                                                      |    |
|----------------------------------------------------------------------|----|
| 1 Ղազարոսի չարութիւնը . . . . .                                      | 5  |
| 2 Տասն կոչսեր . . . . .                                              | 8  |
| 3 Յիսուսի մատնութիւնը . . . . .                                      | 11 |
| 4 Ոտնալուաց . . . . .                                                | 13 |
| 5 Յիսուսի թաղումը . . . . .                                          | 14 |
| 6 Յիսուսի չարութիւնը . . . . .                                       | 15 |
| 7 Յիսուսի համբարձումն . . . . .                                      | 16 |
| 8 Հոգեգալուստ . . . . .                                              | 17 |
| 9 Վերափոխումն . . . . .                                              | 21 |
| 10 Աբգար թագաւորը դեսպաններ է ուղարկում<br>Յիսուսի մօտ . . . . .     | 23 |
| 11 Թադևոս և Բարդուղիմէոս . . . . .                                   | 25 |
| 12 Ս. Գրիգոր (կամ Երկրորդ) Լուսաւորիչ . . . . .                      | 28 |
| 13 Հռիփսիմեան և Գալիանեան կոչսերը փախ-<br>չում են Հայաստան . . . . . | 34 |
| 14 Ս. Գրիգորին դուրս են բերում վիրաբից . . . . .                     | 36 |
| 15 Ս. Գրիգոր Լուսաւորչի երազը . . . . .                              | 41 |
| 16 Էջմիածնի տաճարի շինութիւնը . . . . .                              | 42 |
| 17 Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ հաւատոյ հանգա-<br>նակը . . . . .        | 45 |

§ 1.

### ՂԱԶԱՐՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Բեթանացի Մարիամի և Մարթայի եղբայր Ղազարոսը Հիւանդացաւ: Քույրերը մարդ ուղարկեցին Յիսուսի մօտ ասելու. «Տէր, նա՛ որին դու սիրում էիր, Հիւանդացել է»: Բայց մինչև դեսպանները համբաւ կրեբէին, Ղազարոսը մեռաւ:

Յիսուս սիրում էր Մարթային, Մարիամին և Ղազարոսին: Երբ լսեց, թէ նա Հիւանդ է, ասաց իւր աշակերտներին՝ «Յկէք զնանք Հրէաստան, մեր բարեկամ Ղազարոսը Հիւանդ է»: Յիսուս զարձաւ Բեթանիա: Երդէն չորս օր էր՝ ինչ գերեզմանի մէջ էին գրել: Ազգականները շատերն եկել էին Մարիամի և Մարթայի մօտ՝ մխիթարելու համար: Երբ Մարթան լսեց, թէ Յիսուս գալիս է, զնաց դիմաւորելու, իսկ Մարիամը տանը մնաց: Մարթան ասաց Յիսուսին՝ «Տէր, եթէ այստեղ լինէիր, իմ եղբայրը չէր մեռնի, բայց հաւատացած եմ, Հիմա էլ ինչ



որ Աստուածանից խնդրես, կկատարէ»: Յիսուս ասաց նրան. «Քո եղբայրը յարութիւն կառնէ»: Մարթան ասաց. «Ինչո՞ւ որ յարութիւն կառնէ վերջին յարութեան ժամանակ»: Յիսուս կրկնեց. «Ես եմ յարութիւնն ու կեանքը, ինձ հաւատացողը, եթէ մեռնի էլ, դարձեալ կապրի, հաւատում ես այս բանին»: Մարթան պատասխանեց. «Այո՛, Տէր, ես հաւատացել եմ, որ դու ես Քրիստոսը՝ Աստուծու որդին»:

Այս ատելուց յետոյ գնաց և թաքուն կանչեց Մարիամին և ասաց. «Վարդապետը եկել է, կանչում է քեզ»: Մարիամը, երբ այս խօսքերը լսեց, շուտով վերկացաւ և եկաւ: Յիսուս գեռ գիւղը չէր մտել: Այն հրէաները որոնք տանն էին և սգուորներին մխիթարում էին, երբ տեսան որ Մարիամը վեր կացաւ և գնաց, իրանք էլ նրա ետեւից գնացին՝ այնպէս կարծեցին, թէ գնում է գերեզմանի վրայ լաց լինելու:

Մարիամը երբ տեսաւ Յիսուսին, ոտներն ընկաւ և ասաց. «Տէր, եթէ այստեղ լինէիր, իմ եղբայրը չէր մեռնի»: Երբ Յիսուս Մարիամին և նրա հետ եկող հիւրերին տեսաւ լաց լինելիս, սիրտը լցուեց և ասաց. «Ո՛ւր դի՛ք նրան»: Նրանք պատասխանեցին. «Տէր, եկ և տես»: Յիսուս արտասուեց: Հրէաներն ասում էին. «Տեսէ՞ք ի՛նչպէս է սիրում նրան»: Միքանիսն էլ ա-

սում էին. «Մի՞թէ սա չէր կարող այնպէս անել, որ Ղազարոսը չմեռնէր»:

Յիսուս գերեզմանի մօտ գնաց և ասաց. «Վեր առէ՛ք այդ քարը»: Մեռածի քոյր Մարթան ասաց. «Տէր, արդէն հոտած կլինի, որովհետեւ չորս օրուան թաղած է»: Յիսուս ասաց. «Չասացի՞ քեզ, եթէ հաւատաս, Աստուծու փառքը կտեսնես»:

Քարը վեր առան: Յիսուս աչքերը երկինք բարձրացրեց և ասաց. «Հայր, շնորհակալ եմ քեզնից. դու ինձ միշտ լսել ես. խնդրում եմ, որ այս անգամ էլ լսես, որպէսզի այս ժողովուրդը հաւատայ, թէ դու ես ուղարկել ինձ»: Այս ասաց և բարձր ձայնով աղաղակեց. «Ղազարէ, արի՛, եկ արտաքս»: Մեռելն իսկոյն դուրս եկաւ՝ ձեռներն ու ոտները կապկպած, իսկ երեսը վարշամակով պատած: Յիսուս ասաց. «Արձակեցէ՛ք դրան և թողէ՛ք որ գնայ»: Մարիամի մօտ եկած հրէաներից շատերը տեսան Յիսուսի արածը և հաւատացին նրան:

#### ՂԱԶԱՐՈՍԻ ՅԵՐՈՈԹԵԱՆ ԶԱՐԱԿԱՆԸ

Կենդանութեանց քաշխող Քրիստոս  
 Ի Բեթանիա եկաւորեալ այսօր,  
 Բարեկամին Ղազարու  
 Պարգևէ զկենդանութիւն:



Կեանք բաշխող Քրիստոսը Բեթանիա գալով  
այսօր՝ (իւր) բարեկամ Ղազարոսին կեանք պարգևեց:

*Տընօրինաբար արտասուելով՝  
Ընդ Մարթայի եւ ընդ Մարիամոյ  
Ողբակցէր եւ որպէս մարդ հարցանէր.  
Ո՞ր եղիք զՂազարոս:*

Կարեկցաբար արտասուելով՝ Մարթայի եւ Մարիամի հետ ողբումէր եւ ինչպէս մարդ, հարցնում էր. «Ո՞ր գրիք Ղազարոսին»:

*Եւ որպէս զԱստուած քարրառով  
Յարուցանէ ի միտելոց զշորեքօրեայն  
Եւ զուզրնթաց ճայնին միտեայն  
Եկն արտաքս անապական:*

Եւ իբրեւ Աստուած՝ խօսքով չարութիւն է տալիս չորս օրուայ մեռածին եւ ձայն տալուն պէս՝ մեռելը դուրս է գալիս անապական մարմնով:

## § 2.

### ՏԸՍՆ ԿՈՅՍԵՐ

Հին ժամանակ հրէաների մէջ հարսանիքն այսպէս էր—փեսան չէր գալիս հարսի մօտ եւ տուն տանում, այլ՝ հարսանեաց երեկոյեան հարսի ընկերուհիներից տասն կոյս աղջիկ՝ կէս

գիշերին դուրս էին գալիս փեսայի առաջ՝ հարսի հետ: Աղջիկները ձեռներին ձողեր էին ունենում ծալրից լապտեր կախած: Բացի դրանից հետներն ամանով աւելորդ ձէթ եւ վերցնում էին, որ եթէ փեսան ուշանալու լինի, լապտերի մէջ ածեն: Փեսան էլ իւր տանից էր դուրս գալիս եւ ընկերների հետ միասին գալիս էին հարսի առաջ: Երկու խմբերը պատահում էին իրար փողոցի մէջ:

Այսպէս մի անգամ տասն կոյս աղջիկ իրանց լապտերները վեր առան եւ զնացին փեսայի առաջ: Նրանցից հինգը լիմար, այսինքն անգգոյշ էին, իսկ հինգը իմաստուն, այսինքն զգոյշ էին: Յիմարները մոռացան իրանց լապտերների հետ ձէթ վերցնել, իսկ իմաստուններն առան: Փեսան ուշացաւ. ամենի քունը տարաւ:

Կէս գիշերին ձայն բարձրացաւ, թէ փեսան գալիս է: Կոյսերը վերկացան եւ լապտերները պատրաստեցին: Յիմարների լապտերների մէջ ձէթ չկար, հանգչելու վրայ էր, ուստի ասացին իմաստուններին. «Ձեր ձէթիցը մեզ էլ տուէք, որովհետեւ մեր լապտերները հանգչում են»: Իմաստունները պատասխանեցին. «Մի գուցէ մեզ եւ ձեզ բաւական չլինի, աւելի լաւ է վաճառականների մօտ զնացէք եւ զնեցէք ձեզ համար:



Եւ երբ նրանք ձէթ առնելու գնացին, փեսան եկաւ և պատրաստները նրա հետ հարսանիք մտան ու դուռը փակուեց: Յետոյ միւս կոյտերն էլ եկան և ասացին. «Տէր, Տէր, բաց մեզ»: Փեսան պատասխանեց և ասաց. «Ճշմարիտն եմ ասում, որ ես ձեզ չեմ ճանաչում»:

### ՏՈՍՆ ԿՈՅՍԵՐԻ ԶԱՐԱԿԱՆԸ

*Իմաստուն կուսանքն  
Պատրաստեալ իւր լապտերաց,  
Ելին ընդ առաջ երկնաւոր փեսային  
Վառեալ լապտերօք:*

Իմաստուն կոյտերը լապտերների համար իւր վերցնելով՝ վառած լապտերներով դուրս եկան երկնաւոր փեսայի առաջ:

*Իսկ յիմարաց կուսիցն  
Ունայնացեալք ի յիւղոյ  
Անպատրաստ գտան գալստեան փեսային  
Շիջեալ լապտերօք:*

Իսկ չիմար կոյտերը հետները իւր վերցրած չքինելով՝ անպատրաստ գտնուեցան փեսայի գալստեան, որովհետեւ լապտերները հանգած էին:

*Վասն որոյ եւ մեր  
Պատրաստեցուք իւր հոգեւոր,*

*Զի մոցուք ի յառազաստ անմահ փեսային  
Վառեալ լապտերօք: \*)*

Այս պատճառով էլ մենք հոգեւոր իւր պատրաստենք, որպէսզի վառած լապտերներով կարողանանք մտնել անմահ փեսայի առաջատուր (հարսանիքի տունը):

### § 3.

### ՅԻՍՈՒՍԻ ՄԱՏՆՈՒԹԻՒՆԸ

Հրէաներից մի քանիսը գնացին փարիսեցիներին, այսինքն այդ երկրի զիտնականների մօտ և պատմեցին, թէ ինչպէս Յիսուս Ղազարոսին յարութիւն տուաւ: Քահանայապետներն ու փարիսեցիներն իսկոյն ժողով արին և ասացին. «Ի՞նչ անենք, այն մարդը շատ հրաշքներ է անում, եթէ այդպէս թող տանք, ամենքն էլ նրան կհաւատան»: Նրանցից մինը՝ Վալիափա անուամբ, որ այն տարուայ քահանայապետն էր, ասաց. «Պաշտօն ռչինչ չգիտէք և հեռուն չէք էլ մտածում. աւելի լաւ է մի մարդ մեռնի ժողովրդի համար, քան թէ բոլոր ազգը կորչի»: Այն օրից սկսած՝ քահանայապետը և փարիսեցիները խորհուրդ արին, որ սպանեն

\*) Առակի մեկնութիւնը տես. իմ „Դասագիրք կրօնի“ II հատ. մասն բ. § 41.







Մերկացաւ յինքննէ զԱստուածային  
սուրբ հոգին եւ զգեցաւ զսատանայ որպէս  
զհանդերձ արկաւ գիրքնաւ:

Յուգան մերկացաւ (հեռացրեց իրանից) աս-  
տուածային սուրբ հոգին եւ հազաւ սատանային\*  
(չարութիւնը) ինչպէս զգեստ:

§ 5.

### Յ Ի Ս Ո Ւ Ս Ի Թ Ա Ղ Ո Ւ Մ Ը

Արհէշ—(Կէս ... Կարէ Է. Կէս. § 17 էրէս 32) եւ այլապէս

### Զ Ա Ր Ա Կ Ա Ն Թ Ա Ղ Մ Ա Ն

Յովսէփ ճշմարիտ եւ արդար հայցէր  
ի Պիղատոսէ զհասարակաց զպարգեւատուն,  
որ տուաւ մեզ զանձ անկողորստելի:

Ճշմարիտ եւ արդար Յովսէփը խնդրում է Պի-  
ղատոսից ամենիս պարգև տուողին (Յիսուսին), որ  
շնորհուեցաւ մեզ (Աստուածանից) որպէս անկողորս-  
տելի զանձ:

Պատեալ սուրբ կտաւօք զմարմինն  
տէրունական՝ զարկողն զլոյս որպէս զօթոց,  
որ զգեցոյց մեզ զգեստ անկողորստելի:

Սուրբ կտաւով պատելով տէրունական մարմի-  
նը, որի ծածկոյթն է լոյսը եւ որը հապցրեց մեզ ան-  
կողորստելի (անապական) զգեստ:

Նդաւ ի նորափոր ի վիմի եւ մատա-  
նեաւ կնքեցաւ \*), որ զնախաստեղծն կենդա-  
նացոյց եւ զմարդկան կապանս մահու ելոյծ:

Դրուեցաւ նոր փորուած գերեզմանի մէջ եւ  
մատանիքով կնքուեցաւ. նա՛ որ առաջին մարդուն  
(Ադամին) կեանք տուաւ եւ մարդկանց մահուան կա-  
պանքները քանդեց:

§ 6.

### Յ Ի Ս Ո Ւ Ս Ի Յ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Արհէշ—(Կէս ... Կարէ Է. Կէս. § 18 էրէս 33) եւ այլապէս

### Զ Ա Ր Ա Կ Ա Ն Յ Ա Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

Ընդ արշալոյսն առաւօտուն  
Կանխեալ կանանցն ի գերեզմանն ասելով՝  
Քրիստոս յարեաւ ի մեռելոց:

Կանայքն առաւօտեան արշալուսին վաղ գերեզ-  
ման գնացին ասելով՝ Քրիստոս մեռելներից յարու-  
թիւն առաւ:

\*) Տես. իմ „Դասագիրք կրօնի“ II հատոր, մասն Բ.



Եւ առ նոսա ասէր հրեշտակն.

Ձի՞ խնդրէք գլենդանին ընդ մեռելալս՝

Քրիստոս յարեալ ի մեռելոց:

Հրեշտակն ասում է նրանց. «Կենդանին մեռելների մէջ ինչու էք որոնում, Քրիստոս մեռելներից չարութիւնն առաւ:


Փութացարուք, ո՛վ սուրբ կանայք,  
եւ պատմեցէք աշակերտացն ասելով՝  
Քրիստոս յարեալ ի մեռելոց:

Չտապեցէք, ով սուրբ կանայք և պատմեցէք  
աշակերտներին ասելով՝ Քրիստոս մեռելներից չարութիւնն առաւ:

§ 7.

Յ Ի Ս Ո Ւ Ս Ի Հ Ա Մ Բ Ա Ր Չ Ո Ւ Մ Ն

Յարութիւնից յետոյ Յիսուս քառասուն օր  
էլի մնաց երկրիս վրայ և երբեմն երբեմն յայտ-  
նում էր իւր աշակերտներին: Սրանից յետոյ  
Ձիթենեաց լեռու բարձրացաւ աշակերտների  
հետ. այնտեղ պատուէր տուաւ նրանց և ասաց.  
«Երուսաղէմից չհեռանաք, այլ սպասեցէք Հօր  
Աստուծու աւետիքին, որ ես ձեզ խոստացել եմ:  
Դուք զօրութիւն կստանաք երկնքից, երբ սուրբ



Հոգին ձեզ վրայ կիջնէ և կլինիք իմ վկաները  
Երուսաղէմում, ամբողջ Հրէաստանում և մինչև  
երկրիս ծայրերը: Ուրեմն գնացէ՛ք և բոլոր ազ-  
գերին ուսուցէ՛ք Հօր, Որդւոյ և սուրբ Հոգւոյ  
անունով: Ուսուցէ՛ք նրանց, որ պահեն այն ամենը,  
ինչ որ ես ձեզ պատուիրեցի: Ով կհաւատայ և  
կմկրտուի, նա կփրկուի, իսկ ով չի հաւատայ,  
նա կզատապարտուի:


Երբ որ այս ասաց, բարձրացրեց ձեռնե-  
րը և օրհնեց նրանց: Օրհնելու ժամանակ բա-  
ժանուեց նրանցից և երկինք բարձրացաւ: Մի  
ամպ ծածկեց նրան աշակերտների աչքից: Նը-  
րանք երկրպագելին ու մեծ ուրախութիւնով  
յետ դարձան Երուսաղէմ և ամեն օր տաճա-  
րում զովում և օրհնում էին Աստուծուն:

Համբարձման տօնը կատարումենք Զատ-  
կից 40 օր յետոյ:

§ 8.

Հ Ո Գ Ե Գ Ա Լ Ո Ւ Ս Տ

Քրիստոսի Համբարձումից յետոյ Կառաքեալ-  
ները դարձան Երուսաղէմ և ամենքը միասին  
էին: Տասն չրից յետոյ յանկարծակի մի ձայն  
լսուեց երկնքից՝ սաստիկ փչող քամու նման և



29605-63



լցրեց բոլոր տունը, ուր նստած էին: Սրանից չետոյ կրակի նման առանձին առանձին լեզուներ երևացին և այդ լեզուներից ամեն մինը նրանց իւրաքանչիւրի վրայ իջաւ: Իսկոյն սուրբ Հոգով լցուեցան և սկսեցին զանազան լեզուներով խօսել:

Քացի տեղացիներից Երուսաղէմում բնակւում էին նաև աշխարհիս ամեն ծայրերից եկած աստուածավախ հրէաներ: Երբ երկնքից իջնող ձայնը լսելի եղաւ, բազմութիւնը եկաւ և միասին հաւաքուեցաւ, որովհետև ամենքն էլ լսում էին, թէ ինչպէս առաքեալները ուրիշ-ուրիշ լեզուներով էին խօսում: Ամենքն էլ զարմանում և ասում էին միմեանց. «Չէ՞ որ այս խօսողները բոլորն էլ գալիլիացիներ են. տեսէ՞ք ինչպէս մեր լեզուներով խօսում և պատմում են Աստուծու մեծամեծ գործերը»: Ամենքն էլ զարմանում և մէկը միւսին ասում էր. «Այս Բնչ պիտի լինի»: Իսկ ոմանք էլ ծաղր էին անում և ասում էին. «Սրանք երևի հարբած են»:

Պէտքս աստիճանի բարձր: Այն ժամանակ Պետրոսը տեղից վեր կացաւ և սկսեց խօսել. «Ո՛վ հրէաստանցիներ և Երուսաղէմում բնակւողներ, լաւ լսեցէ՛ք ինչ որ ես ձեզ ասելու եմ, սրանք հարբած չեն, ինչպէս որ կարծում էք, որովհետև դեռ ևս առաւօտեան ժամի 3-ն է (այսինքն մեր ժամի 9-ը): Լսեցէ՛ք, ո՛վ իսրայէ-

լացիներ, Յիսուս Նազովրեցուն, որ Աստուածանից ուղարկուեց և ձեր մէջ հրաշքներ գործեց, դուք նրան խաչավրայ սպանեցիք, բայց Աստուած երեք օրից չետոյ յարութիւն տուաւ նրան»:

Ժողովուրդը՝ որ այս քարոզը լսեց, զղջաց իւր սրտում: Հատերը գալիս էին Պետրոսի և միւսների մօտ և ասում էին. «Ի՞նչ անենք»: Պետրոսն էլ ասում էր նրանց. «Այաշխարհեցէ՛ք, թող ձեզանից ամեն մինը մկրտուի Յիսուս Քրիստոսի անունով: Ով կմկրտուի, սուրբ Հոգւոյ շնորհը կընդունի»: Այն օրը երեք հազար մարդ հաւատաց Պետրոսի խօսքերին և մկրտուեց:

Հոգեգալստեան տօնը կատարում ենք Զատիկից 50 օր յետոյ:

#### ՉԱՐԱԿԱՆ ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ

Այսօր երկնայինքն ուրախացան  
Ընդ երկնաւորացս նորոգումն,  
Բանգի նորոգողն էից Հոգին էջ ի սուրբ վեր-  
նատունն,  
Որով նորոգեցան դասք առաքելոց:

Այսօր երկնայիններն (հրեշտակները) ուրախացան երկրումը բնակւողներնիս (մարդկանց) նորոգուելու համար, որովհետև էակներին նորոգող սուրբ



հոգին իջաւ վերնատուն և առաքեալների դասը նորոգեց:

Այսօր հողանիւթեայ ընուծինս ցնծայ  
Ընդ հօր հաշտութեան,  
Քանզի որ երարձ զհոգին ի մարդկանէ զմար-  
մին եղելոց.  
Դարձեալ վերստին զնոյն պարգեւէ:

Այսօր մեր հոգեղէն բնութիւնը ուրախանում է հայր Աստուծու (մարդկանց հետ) հաշտուելու վրայ, որովհետեւ նա՝ որ իսկեց մարդկանցից մարմին դարձած հոգին (Նոյի ժամանակ), կրկին անգամ նոյնը (հոգին) պարգևում է (մարմին դարձածներին — մարդոց) \*):

Այսօր մանկունք եկեղեցոյ տօնեն ցնծու-  
թեամբ

Զգալուստ սուրբ Հոգւոյն.

Որով զարդարեցան ի գգեստս լուսափայլս  
եւ գերապայծառս  
Երգեն ընդ սրովքէսն գերեքսրբենին

Այսօր եկեղեցւոյ մանուկներն ուրախութեամբ տօնում են սուրբ Հոգւոյ գալուստը, որի շնորհիւ

\*) Մարդիկ ուրախանում են, որ հայր Աստուծո՞ւ մարդոց հետ հաշտուեց, որովհետեւ Նոյի ժամանակ մարդիկ վատացել էին. Աստուծո՞ւ էլ իւր հոգին նրանցից վերացրել էր, իսկ այսօր նոյն հոգին պարգևում է:

զարդարուեցան լուսափայլ և գերապայծառ զգեստ-ներով, (ուստի) երգում են Սրովքէների հետ Երեք սրբենին (սուրբ, սուրբ երգը):

## § 9.

### Վ Ե Ր Ա Փ Ո Ւ Ո Ւ Մ Է

Յիսուս խաչի վրայից ասաց Յովհաննէս առաքեալին, որ իւր մօրը խնամք տանէ: Այն օրից սկսած Մարիամը 16 տարի շարունակ Յովհաննիսի մօտն էր՝ մինչև իւր մահը:

Երբ սուրբ Կոյտ Մարիամը մեռաւ, առաքեալները թաղեցին նրան Գեթսեմանում, որտեղ Յուդան Յիսուսին զինուորների ձեռք մատնեց: Աստուածածնի մահուան ժամանակ բոլոր առաքեալները՝ բացի Քարդուղիմէոսից, Երուսաղէմումն էին: Երբ Քարդուղիմէոսը Երուսաղէմ եկաւ և իմացաւ Տիրամօր մահը, խիստ տխրեց և ցանկացաւ տեսնել նրա գերեզմանը: Առաքեալները Գեթսեմանի տարան նրան, բայց որքան զարմացան, երբ գերեզմանը բաց արին և ոչինչ չգտան, որովհետեւ Յիսուս Քրիստոս Հրեշտակների ձեռով նրա մարմինը երկինք էր տարել, այսինքն վ ե ր ա փ ո խ ե լ է ր:

Քարդուղիմէոս առաքեալը շատ էր ցաւում, որ չկարողացաւ ոչ Տիրամօրը տեսնել և ոչ նրա



մարմինը: Ուստի միւս առաքեալները, նրան միմիջարեւելու համար՝ Աստուածածնի պատկերն ընծայեցին նրան: Բարդուղիմէոս առաքեալը մի վանք շինեց և այս պատկերն այնտեղ դրաւ:

Մեր եկեղեցին տօնում է այդ օրը՝ երբ Հրեշտակները սուրբ կոյս Մարիամի մարմինը երկինք տարան, այսինքն վերափոխեցին և դրա համար էլ այդ տօնի անունը վերափոխումն է:

Այդ օրը եկեղեցի ենք գնում և խնդրում ենք Աստուածածնից, որ բարեխօս լինի իւր որդի Յիսուս Քրիստոսի մօտ մեր աղօթքը լսելու, դրա համար էլ եկեղեցում երգում ենք.

«Փառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ, մայր Քրիստոսի, մատո զաղաչանս մեր որդւոյ քո և Աստուծոյ մերոյ»:

Ով դու փառաւորուած և օրհնուած միշտ սուրբ կոյս՝ Քրիստոսի մայր՝ Մարիամ Աստուածածին, մեր աղօթքը հասցրու քո Որդուն՝ մեր Աստուծուն:

**ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԶԱՐԱԿԱՆԸ:**

Անկանիմք առաջի քո Աստուածածին և խնդրեմք զանարատ զկոյսդ:

Քո առաջն ենք ընկնում (երկրապագութիւն, տալիս) ով Աստուածածին և աղաչում ենք քեզ՝ անարատ կոյսիդ:

Բարեխօսեա՛ վասն անձանց մերոց և աղաչեա՛ զմիածին որդիդ:

Բարեխօսիր մեզ համար և աղաչիր քո միածին որդուն:

Փրկել զմեզ ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց:

Որպէսզի ազատէ մեզ փորձութիւնից և ամեն տեսակ վտանգից:

Վերափոխման տօնին եկեղեցում խաղող ենք օրհնում:

§ 10.

ԱՅԳԱՐ ԹԱԳԱՌՈՐԸ ԴԵՍՊՈՆԵՐ Է  
ՈՒՂԱՐԿՈՒՄ ՅԵՍՈՒՍԻ ՄՕՏ:

Հայոց Աբգար Թագաւորը եօթը տարի շարունակ հիւանդ էր. ամեն տեսակ դեղ գործ էր դրել, բայց չէր առողջացել: Այդ ժամանակներումն էր, որ լսեց, թէ Հրէաստանում Յիսուս առանց դեղի բժշկում է ամեն տեսակ հիւանդու-



թիւններ, ուստի նամակ զրեց և գեսպանների ձեռով ուղարկեց, որ գալ և իրան բժշկէ: Ահա Աբգարի գրած նամակը. «Ես լսել եմ, որ դու առանց զեղի բժշկում ես հիւանդներին: Ինձ պատմեցին, որ դու կոյրերի աչքը բաց ես անում. կաղերին ոտք ես տալիս. բորոտներին սրբում ես. սատանաներին հալածում ես. երկար ժամանակ հիւանդութիւն ունեցողներին բժըշկում ես և մինչև անգամ մեռելներին յարութիւն ես տալիս: Երբ ես այս բոլորը լսեցի, ինքս ինձ ասացի, որ դու կամ Աստուած ես՝ երկնքից իջած և կամ Աստուծու որդի: Ուստի աղաչում եմ քեզ, որ գաս և ինձ բժշկես: Լըսեցի նոյնպէս, որ հրէաները քեզ նեղացնում են. ես մի փոքրիկ քաղաք ունեմ, արի ինձ մօտ, երկուսիս էլ բաւական է: Քեզ այստեղ ոչոք չի կարող հալածել»: Վերջը պատուիրեց դեսպաններին և ասաց, որ եթէ Յիսուս չկարողանայ գալ, նրա պատկերը քաշեն և իրան բերեն: Այս բանի համար առանձին նկարիչ ուղարկեց:

Դաստառուակ: Դեսպանները նամակը Յիսուսին տարան: Յիսուս չկարողացաւ գալ և մեր Աբգար թագաւորին այս պատասխանը գրեց. «Երանի՛ նրան՝ ով ինձ չէ տեսել, բայց հաւատում է: Գրում ես, որ քեզ մօտ գամ, չեմ կա-

րող, որովհետև ես չեմ եկել հանդիստ կեանք վարելու, այլ՝ չարչարուելու և խաչուելու: Երբ այս բոլորը կատարեմ, վերջացնեմ, յետոյ հայր Աստուծու մօտ պիտի գնամ: Իսկ իմ համբարձումից յետոյ աշակերտներեցս մինին կուղարկեմ, որ գալ, քեզ բժշկէ և քո հպատակներին էլ կեանք պարգևէ:

Նկարիչը երբ տեսաւ, որ Յիսուս չէ գալիս, սկսաւ նրա պատկերը նկարել, բայց չէր կարողանում: Այս որ տեսաւ Յիսուս, նկարչին իւր մօտ կանչեց. մի կտոր մաքուր կտաւ առաւ. երեսին գրաւ և նրա վրայ նկարուեց իւր պատկերը: Յետոյ նկարչին տուաւ, որ Աբգարին տանէ: Այս պատկերը կոչւում է դաստառակ կամ անձեռագործ պատկեր:

# § 11.

Թ Ա Դ Է Ո Ս Ե Ի Բ Ա Ր Դ Ո Ւ Ղ Ի Մ Է Ո Ս

Յիսուս բացի 12 առաքեալներից ունէր 72 աշակերտ ևս:

Քրիստոսի Համբարձումից յետոյ աշակերտներից մինը՝ Թագէոս անունով, Հայաստան եկաւ: Երբ Թագէոսն Աբգարի պալատը մտաւ, թագաւորը երեսի վրայ ընկաւ և երկրպագութիւն



տուաւ նրան: Թագէտը թագաւորին և բոլոր քաղաքացիներին Քրիստոսի վարդապետութիւնը քարոզեց. Արգարի գլխին ձեռը դրաւ և բժըշկեց. նոյնպէս քաղաքի բոլոր հիւանդներին: Այս բանը որ տեսան քաղաքացիները, բոլորն էլ հաւատացեալ դարձան և մկրտուեցան: Ս. Թագէտը մնալ չէր կարող—նա միւս առաքեալների նման պիտի մանգար զանազան տեղեր և քարոզէր, ուստի թագաւորի թագ շինող Ադդէին եպիսկոպոս ձեռնադրեց և հովիւ նշանակեց այս նոր հաւատացեալների վրայ: Նա սրանով չբաւականացաւ, այլ հրաման առաւ և գնաց Հայաստան՝ թագաւորի քրոջորդի Սանատրուկի մօտ, քարոզեց նրան էլ և իւր մարդկանցն էլ և բոլորին մկրտեց: Սանատրուկի աղջիկ Սանդուխտին էլ մկրտեց:

Սանատրուկը շատ կարճ ժամանակ քրիստոնէայ մնաց—հենց Արգարի մահուանից յետոյ ուրացաւ քրիստոնէութիւնը և սկսեց հալածել քրիստոնեաներին ու նահատակել: Իւր Սանդուխտ աղջկան շատ համոզեց, որ ուրանայ քրիստոնէութիւնը, բայց չկարողացաւ: Սանդուխտ կոյսը պատասխանեց, որ կուռքերին ոչ մի ժամանակ երկրպագութիւն չեմ տայ, կմեռնեմ, բայց կուռք չեմ պաշտի: Հայրը իւր աղջկան նահատակել տուաւ: Բայց սրանով չը-

բաւականացաւ—սրովհետեւ Սանդուխտ կոյսը Ս. Թագէտից էր ուսել քրիստոնէութիւնը, ուստի նրան էլ նահատակել տուաւ:

Այսպէս՝ թէ ուսուցիչը և թէ աշակերտուհին լաւ համարեցին մեռնել՝ քան թէ կուռք պաշտել:

Ս. Թագէտի մահուանից յետոյ՝ Յիսուսի աշակերտներից մի ուրիշը ևս եկաւ Հայաստան, որ քրիստոնէութիւնը քարոզէ—սրա անունն էր Բարդուղիմէոս: Սա բերաւ իւր հետ Ս. կոյս Մարիամի պատկերը. Տիգրիս գետի ափին մի վանք շինեց՝ Աստուածածին անունով և այն պատկերն այնտեղ դրաւ:

Ս. Թագէտ և Բարդուղիմէոսն առաջին անգամ եկան մեր երկիրը քրիստոնէութիւնը քարոզելու և լուսաւորելու հայերին, սրա համար էլ նրանց անուանում ենք առաջին (նախկին) լուսաւորիչներ: Որովհետեւ այդպիսի գեղեցիկ օրինակ են թողել մեզ համար, ուստի մենք էլ ամեն տարի նրանց անունը յիշում ենք եկեղեցում և տօն կատարում: Այդ օրը երգում ենք



ՀԱՐԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՅ

Հայրատունի այգւոյն հրեղէն պարիսպք  
եւ բարձր աշտարակք. ոսկեղէն բաժակք եւ  
ժիր մատուռակք Հայաստանեաց հարք հոգե-  
ւորք Բարդուղիմէոս եւ Թադէոս, բարեխօս  
լերուք առ տէր վասն անձանց մերոց:

Հայրատունի այգու (եկեղեցու) հրեղէն պարիսպներ և բարձր աշտարակներ, ոսկեղէն բաժակներ և ժիր մատուռակներ—ով դուք հայաստանցիներիս հոգևոր հայրեր՝ Թադէոս և Բարդուղիմէոս, բարեխօս եղէք տիրոջ առաջ մեզ համար:

Թագաւոր երկնաւոր,  
Զեկեղեցի քո անշարժ պահեա՛,  
եւ զերկրպագուս անուանող քում՝  
Պահեա՛ ի խաղաղութեան:

Երկնաւոր Թագաւոր (Յիսուս), քո եկեղեցին անշարժ պահիր. քո անուան երկրպագութիւն տուողներին խաղաղութեան մէջ պահիր:

§ 12.

Ս. ԳՐԻԳՈՐ (կամ Երկրորդ) ԼՈՒՍԱՆՈՐԻՉ

Անակի Հայաստան գալը: Պարսից Արտաշիր Թագաւորը մի օր իւր պալատականների հետ

այսպէս խօսեց— Ով Հայոց խոսքով Թագաւորին սպանէ, ինչ փառք ու պատիւ էլ կամենայ, կստանայ ինձնից: Անակ անունով մինը՝ յանձն առաւ Արտաշրի ցանկութիւնը կատարել: Սա վերջրեց իւր ընտանիքը, հասաւ Հայաստանի սահմանը և այնպէս ձևացաւ՝ որպէս թէ Պարսից Թագաւորն իրան հալածում է, ուստի պաշտպանութիւն խնդրեց մեր Թագաւորից: Խոսքովն Անակին սիրով ընդունեց: Նա այնպէս էր կարծում, որ փախստականը շատ տեղեկութիւններ կհաղորդէ Արտաշրի զօրքի և նրա բոլոր գործերի մասին, ուստի Անակին հենց իւր պալատում տեղ տուաւ: Այնուհետեւ Արտաշրի լըրտեսը նրա մասին էր մտածում, թէ ինչպէս սպանէ մեր Թագաւորին:

Խոսքովի մահը: Մի օր խոսքովը որսի գնաց իւր պալատականների հետ: Անակին էլ հետն առաւ: Որսի ժամանակ Անակը խոսքովին փոքր ինչ հեռու տարաւ՝ որպէս թէ ծածուկ բան ունի ասելու և սրով խփեց, իսկ ինքը ձի նստաւ, սկսաւ փախչել: Մարդիկ ետևիցն ընկան: Անակը փախաւ և իրան Երասխ գետը ձգեց ու խեղդուեց: Խոսքովը դեռ չէր մեռել, որ հրամայեց Անակի ընտանիքը կոտորել: Թագաւորի հրամանը կատարուեց— նրա ընտանիքը սրով կոտորեցին, միայն մանուկ Գրիգորին իւր



Սօփիա դայեակը փախցրեց և տարաւ Կեսարիա քաղաքը:

Երբ Արտաշէին լուր հասաւ թէ Անակն սպանել է Խոսրովին, մեծ զօրք առաւ և եկաւ Հայաստան, որպէսզի Խոսրովի տունը ջնջէ: Հայերը չկարողացան պարսիկների դէմ կռուել: Արտաշէրը մտաւ մեր երկիրը և հրամայեց Խոսրովի ընտանիքը կոտորել: Այդպէս էլ արին: Մի տղայ միայն՝ Տրդատ անունով, հազիւ կարողացան փախցնել և տանել Հռովմ քաղաքը:

Դրիգորը *Կեսարիայում* եւ Հռովմում: Այդ ժամանակում Սօփիան Դրիգորին խնամում էր Կեսարիայում: Փոքր ինչ որ մեծացաւ, նրան ուսումնարան ուղարկեց, ուր սովորում էր յունարէն և ասորերէն: Սօփիան ինքը քրիստոնեայ էր, ուստի և փոքրիկ Դրիգորին սովորցրեց, ինչոր հարկաւոր էր քրիստոնէական կրօնի համար: Երբ Դրիգորը չափազանց դարձաւ, ամուսնացաւ Մարիամ անունով մի աղջկայ հետ և նրանից երկու որդի ունեցաւ՝ Վրդաննէս և Արիստակէս: Սրանից յետոյ Մարիամի համաձայնութեամբ Դրիգորը բաժանուեցաւ կնոջից: Մարիամը կուսանոց մտաւ:

Դրիգորին պատմեցին, որ իւր հայր Անակը սպանել է Խոսրով թագաւորին, որի որդի Տրդ-

դատը Հռովմումն է, սրա համար վեր կացաւ և դնաց այն քաղաքը, որպէսզի իւր մեղաւոր հօր փոխարէն Տրդատի մօտ ծառայութիւն անէ և սրանով հօր յանցանքը փոքր ինչ թեթեւացնէ:

Տրդատի քաջագործութիւնները: Խոսրովի որդի Տրդատն էլ Հռովմումն էր մեծանում Գիոկղետիանոս կայսեր մօտ: Երբ հասակն առաւ, զինուորական ծառայութեան մէջ մտաւ: Տրդատը մեծ ոյժ ունէր, լաւ ձի նստել զիտէր և զէնք զօրծածել: Մի անգամ ձեռով բռնեց եղան եղջիւրը և քաշեց, հանեց: Մի անգամ էլ բնկերի հետ կառք էին քշում: Ընկերը թշնամութեամբ բռնեց և Տրդատին կառքից վալը ձգեց, բայց սա ետեւից վազեց և կառքից այնպէս բռնեց, որ ձիերն էլ չկարողացան առաջ գնալ: Մի անգամ էլ Հռովմ քաղաքի Գիոկղետիանոս կայսրը պատերազմ ունէր: Թշնամին մարդ ուղարկեց և այսպէս էր ստում—փոխանակ զօրքով մէկ մէկու հետ կռուենք և իզուր տեղը մարդ սպանենք, արի՛ ես և դու մենամարտենք—եթէ ես քեզ յաղթեմ, դուք ամենքդ ինձ ծառայ եղէք, իսկ եթէ դու ինձ յաղթես, մենք ամենքս քեզ հարկ տանք:

Գիոկղետիանոսն այս բանից խիստ վախեցաւ և չզիտէր թէ ինչ անէ: Կայսեր զօրավար-



ներից մէկն ասաց. «Տէր թագաւոր, ամենեւին մի մտածիր այդ մասին, իմ գնդի մէջ Հայոց թագաւորի ցեղից մի տղայ կայ՝ անունը Տըր-գատ, նա կարող է քեզ ազատել և Տրդատի մասին շատ բաներ պատմեց: Դիտելետիանոսն իսկոյն կանչել տուաւ իւր մօտ Տրդատին. թագաւորական զգեստ հագցնել տուաւ. թագաւորի նշաններով զարդարեց և ամեն տեղ ասել տուաւ, որ նա կայսրն ինքն է: Միւս օրը թշնամու թագաւորի մօտ մարդ ուղարկեց ասելու, որ վաղն իրար հետ կմենամարտեն: Երկրորդ օրը՝ Տրդատը ձին նստած՝ քշեց թշնամու կողմը. յարձակուեց նրա վրայ. բռնեց և Դիտելետիանոսի մօտ բերաւ: Կայսրը չափից դուրս ուրախացաւ: Երբ իմացաւ, որ իրան սպանողը Հայոց թագաւոր Խոսրովի որդին է, թագաւորական զգեստ հագցրեց. գլուխը թագ դրաւ՝ հռովմէական զօրք տուաւ, որ զնայ Հայաստան և իւր հօր փոխարէն թագաւորէ:

Տրդատը Հասաւ Կեսարիա քաղաքը. իւր հետն ունէր և Գրիգորին: Հայ նախարարները երբ իմացան, որ իրանց թագաւորի որդին զօրքով գալիս է, եկան, միացան նրա հետ, որպէսզի միասին՝ պարսիկներին դուրս անեն մեր երկրից:

Ս. Գրիգորին ձգում են Խոսրովի րապ: Տըր-

դատը Հասաւ Երեզա քաղաքը: Այստեղ էր գըտնուում մեր պապերի պաշտած Անահիտ չաստուածուհին: Իսկոյն զոհ բերին նրան և խնդրեցին, որ յաջողութիւն տայ իրանց զօրծին: Թագաւորից սկսած մինչև յետին զինուորը գնում էր երկրպագելու կուռքին: Հերթը Գրիգորին Հասնելով, Տրդատը հրամայեց նրան, որ նա էլ Անահիտին աղօթք անէ: Քայց որովհետև Գրիգորը քրիստոնեայ էր, չուզեց կուռքերին երկրպագութիւն տալ: Տրդատը բարկացաւ Գրիգորի վրայ, պատիժներ տուաւ և հրամայեց, որ անպատճառ Անահիտի առաջ աղօթէ: Գրիգորը մերժեց: Այն ժամանակ թագաւորին պատմեցին, որ նա իւր հօրն սպանող Անակի որդին է: Տրդատը և՛ աւելի բարկացաւ և հրամայեց Գրիգորին խիստ պատիժ տալ—ասաց որ տանեն Սրտաշատ քաղաքի Խորվիրապը ձգեն, որպէսզի այնտեղ սովից մեռնի: Այս վիրապը լի էր բազմաթիւ օձերով և կարիճներով: Այստեղ ձգում էին յաւնաւորներին: Գրիգորն այստեղ 15 տարի մնաց: Մի քրիստոնեայ կին Աստուծու հրամանով ամենայն օր մի մի հաց էր ձգում, որ Գրիգորն ուտի և չմեռնի:

Տրդատը Հայաստան Հասաւ. դուրս արաւ պարսիկներին և ինքն սկսու կռուավարել: Թագաւորը կռապաշտ էր, դրա համար էլ հրաման



Հանեց, որ իւր տէրութեան մէջ՝ ուր որ էլ քրիստոնեայ գտնեն, ստիպեն նրանց՝ կուռքերին երկրպագութիւն տալու, իսկ եթէ հակառակեն, իսկոյն սպանեն:

§ 13.

ՀՌԻՓՍԻՄԵԱՆ ԵՒ ԳԱՅԻԱՆԵԱՆ ԿՈՅՍԵՐԸ ՓԱԽՁՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Այդ ժամանակներում Գիողեաթիանոս կայսրը կամենում էր իւր համար կին առնել: Ամեն կողմ պատկերահաններ ուղարկեց, որ Թագուհի լինելու արժանի աղջիկներ գտնեն. նրանց պատկերները նկարեն և իրան բերեն: Այս պատկերահաններից մի քանիսն էլ Հռովմ քաղաքի մօտ գտնուող կուսանոցը գնացին: Այստեղ մի գեղեցիկ կոյս կար՝ անունը Հռիփսիմէ. սրա պատկերն ուժով քաշեցին և կայսեր տարան: Կայսրը հաւանեց Հռիփսիմէին և ուզում էր նրան Թագուհի դարձնել:

Երբ այս բանն իմացաւ կուսանոցի մայրապետ Գալիանէն, բոլոր կոյսերին հաւաքեց և Հռիփսիմէի հետ միասին փախան, եկան Հայաստան ու Վաղարշապատ քաղաքի մօտ գտնուող մի այգու հնձանում բնակուեցան: Կոյսերից միին ապակիէ յուլունքներ էր շինում, ծախում էին և սրանով ապրում:

Գիողեաթիանոսը խիստ բարկացաւ կոյսերի փախստեան վրայ. ամեն կողմ մարդ ուղարկեց, որ նրանց գտնեն: Երբ իմացաւ, որ Հռիփսիմէն Հայաստան է փախել, մեր Տրդատ Թագաւորին էլ մի նամակ գրեց, որի մէջ ասում էր, եթէ կոյսերին գտնէ, Հռիփսիմէին իրան ուղարկէ, միւսներին սպանէ, իսկ եթէ ցանկանայ, կարող է ամուսնանալ նրա հետ:

Կոյսերի նահատակութիւնը: Տրդատն այս Թուղթն ստանալուն պէս, իւր երկրի մէջ ամեն կողմ մարդ ուղարկեց, որ փնտռեն նրանց: Մի քանի օրից յետոյ կոյսերին գտան: Թագաւորը հրամայեց Հնձանը զինուորներով պատել: Պալատից Թանկագին շորեր ուղարկեց, որ հագցնեն Հռիփսիմէին և իւր մօտ բերեն, որովհետեւ միտք ունէր նրա հետ ամուսնանալ: Հռիփսիմէն չէր կամենում Թագաւորի պալատը գնալ, բայց Թագաւորը իւր ծառաներին հրամայեց, որ բռնեն նրան և պալատ բերեն: Թագաւորի հրամանը կատարուեց — Հռիփսիմէին քաշտալով մինչև պալատը տարան: Հռիփսիմէն ոչ մի ձևով չհամաձայնեց Թագուհի դառնալ. պալատից փախաւ և գնաց իւր ընկերուհիների մօտ. պատմեց նրանց իւր զխովն անցածը, փոքր ինչ հեռացաւ նրանցից և սկսեց Աստուծուն աղօթել:



և շնորհակալութիւն անել, որ իրան աչքպիսի վտանգից ազատեց: Այդ միջոցին թագաւորի դահլիճները ջահերը ձեռներին եկան, դտան Հռիփսիմէին. լեզուն կտրեցին, աչքերը հանեցին և մարմինը կտոր-կտոր արին: Հռիփսիմէից յետոյ սպանեցին նրա 35 ընկերուհիներին մայրապետի հետ միասին:

§ 14.

Ս. ԳՐԻԳՈՐԻՆ ԳՈՐԻՍ ԵՆ ԲԵՐՈՒՄ  
ՎԻՐԱՊԻՑ

Թագաւորն այս բանի վրայ շատ մտածեց. նրա խիղճն իրան տանջում էր—հանգիստ չունէր, քունը չէր տանում: Տրդատը խելագարի պէս՝ վայրենի խողի նման շամբերում թափառում էր: Թագաւորի քոյր Խոսրովադուխտը մի բարի աղջիկ էր: Հրեշտակը սրան երազում երևեցաւ և ասաց. «Եթէ կամենում էք, որ թագաւորն առողջանայ, Գրիգորին պէտք է վերապից հանէք. նա միայն կարող է բժշկել»: Խոսրովադուխտն այս երազը նախարարներին պատմեց. նրանք չհաւատացին, ամենևին չէին կարծում, թէ Գրիգորը 15 տարի վերապում կենդանի մնացած կլինի: Երեք անգամ նոյն երազը կրկնուեց, յետոյ հաւատացին: Այնուհետև Խոսր-

վերապ դնացին, չուանը կախ արին և ձաշն տուին. «Գրիգոր, եթէ կենդանի ես, դուքս արի, քո Աստուածը հրամայեց, որ քեզ այստեղից հանենք»: Գրիգորը կենդանի էր: Նրան դուքս հանեցին և Վաղարշապատ բերին: Տրդատը և նախարարները Գրիգորի ոտներն էին ընկնում և ներողութիւն էին խնդրում: Գրիգորն աղօթեց Աստուծուն և խնդրեց, որ իրան կարողութիւն տայ հիւանդ թագաւորին և նրա նախարարներին բժշկելու: Սրանից յետոյ կոյսերի անթաղ մարմինները, որոնք դեռ թափուած էին փողոցներում, թաղել տուաւ:

Երկրորդ օրը նախարարները թագաւորի հետ Գրիգորի մօտ եկան և խնդրեցին, որ ճշմարիտ հաւատը սովորցնէ իրանց: Գրիգորը շատ ուրախացաւ այս բարի բանի վրայ և 66 օր շարունակ քարոզում և ուսուցանում էր նրանց քրիստոնէական հաւատը:

Ս. Գրիգորի կաթողիկոս ծեռնադրուիլը: Տրտատը, իշխանները և ժողովուրդը հաւատացել էին Քրիստոսին և ընդունել էին քրիստոնէութիւնը, բայց չունէին ոչ քահանայ և ոչ եպիսկոպոս, որ նրանց հոգեւոր պիտոյքները կատարէր, ուստի Տրդատ թագաւորը Գրիգորին կեսաբիա քաղաքն ուղարկեց, որ այնտեղի Ղևոնդ



արքեպիսկոպոսից եպիսկոպոս ձեռնադրուի իբրև Թաղէոս առաքելի աթոռակալից, որպէսզի նոր քրիստոնեայ դարձած Հայ ժողովրդին սովորցնեն քրիստոնէութիւնը: Գրեգորը Կեսարիա գնաց. Ղևոնդից եպիսկոպոս, այսինքն կաթողիկոս ձեռնադրուեց: Վերադառնալիս Ս. Յովհաննէս Մկրտչի և Աթանագիկոսի եպիսկոպոսի մասունքի մի մասն էլ Հետն առաւ ու շատ քահանաներ վերցնելով Հետը՝ դարձաւ Հայաստան՝ Մշի կողմերը:

Այդտեղ կռատներ՝ մեհեաններ կային, քանդեց. կուռքերի սեղաններն, այսինքն բազինները կործանեց, նրանց տեղ եկեղեցի շինեց և Յովհաննէս Մկրտչի մասունքն այնտեղ դրաւ: Այս եկեղեցու անունը Ս. Կարապետ դրաւ, ուր մինչև այսօր էլ անթիւ ուխտաւորներ են գնում:

Տրդատ Թագաւորի մկրտութիւնը: Տըրդատը, երբ իմացաւ որ Ս. Գրեգորը վերադարձել է Կեսարիայից, դուրս եկաւ նրա առաջ շատ իշխանների և ժողովրդի Հետ ի միասին: Ս. Գրեգորն ամենին էլ 30 օր ծոմ պահել տուաւ, յետոյ Թագաւորին, նրա ընտանեացը, իշխաններին և անթիւ ժողովրդեան մկրտեց եփրատ գետի մէջ: Ս. Գրեգորը եօթն օր մնաց այնտեղ և չօր միլիօնից աւելի մարդ մկրտեց:

Ս. Գրեգորը լուսաւորում է Հայաստանը. Սրանից յետոյ Ս. Գրեգորը Տրգատին խորհուրդ տուաւ, որ ամեն դաւառի մէջ ուսումնարան բանայ, այնտեղ քահանաներ պատրաստէ, որ մնացած Հեթանոս Հայ ժողովրդին մկրտեն և Հովուեն: Այս ուսումնարաններից մի քանիսում յունարէն և մի քանիսում էլ ասորերէն էին սովորցնում, որովհետև դեռ ևս Հայերէն դրեր չունէինք:

Քացի սրանից Ս. Գրեգորը 12 եպիսկոպոս ձեռնադրեց Հայոց Համար: Ս. Գրեգորը եղաւ մեր առաջին եպիսկոպոսապետը՝ Հայրապետը՝ կաթողիկոսը: Նա Հայաստանի ամէն կողմերում ուսումնարաններ բաց անել տուաւ, որտեղից ուսումն առածները քահանաներ էին դառնում և Հետզհետէ Հայերին քրիստոնեայ դարձնում—մի խօսքով՝ Ս. Գրեգորը մեր երկիրը լուսաւորեց և դրա Համար էլ նրան ասում ենք Ս. Գրիգօր (կամ երկրորդ) Լուսաւորիչ:

#### Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻ ԶԱՐԱԿԱՆԸ

Այսօր զիմանալի լուսոյն ծագողն

ի խաւարի նստելոցս

ԶԳրիգորիոս սուրբ հայրապետն.

Եկա՛յք վերապատուեցուք:



Խաւարի մէջ նստողներին իմանալի (մտաւոր) լոյս տուող Ս. Գրիգոր հայրապետին եկէք այսօր վերապատուենք:

*Այսօր զանապական հոգւոյն պարգեւան  
Բաշխող որդւոց Թորգոմայ.*

*Յորդիս լուսոյ նուառ ծնեալք.*

*Եկայք վերապատուեսցուք:*

Անապական հոգւոյ պարգևները Թորգոմայ որդւոցս բաշխողին (և) նրանից (Ս. հոգւոց) լուսոյ որդիներ ծնածներս, եկէք վերապատուենք:

*Այսօր զաստուածային քանին պատմողն  
Ի Հայաստան աշխարհի.*

*Աշակերտեալ նմա մանկունք.*

*Եկայք վերապատուեսցուք:*

Հայաստան աշխարհում Աստուծու խօսքը քարոզողին, ով նրան աշակերտող մանուկներ, եկէք այսօր վերապատուենք:

*Այսօր երգէ եկեղեցի որդւովք իւրովք  
Ընդ հրեշտակս.*

*Յիշատակի Լուսատըշին*

*Փառք ի քարճունս Աստուծոյ:*

Այսօր եկեղեցին իւր որդկերանցով հրեշտակների հետ միասին՝ Լուսաւորչի յիշատակի համար՝ երգում է—«Փառք ի քարճունս Աստուծոյ»:

§ 15.

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉԻ ԵՐԱԶՐ

Ս. Գրիգոր Լուսաւորիչը մի անգամ զարմանալի տեսիլք տեսաւ: Նա տեսաւ, որ երկինքը բացուեց և սկսաւ լոյս իջնել այն տեղից գէպի երկիրը: Լուսի հետ միասին իջաւ մի մարդ—Աստուծու միածին որդին—ձեռին բռնած մեծ ոսկէ ուռն՝ չաքուն: Այս մարդը սլանալով իջաւ Վաղարշապատ քաղաքի մէջ տեղը և գետնին մուրճով խփեց: Իսկոյն գետնի տակից՝ անդնդից լուսեցին սարսափելի ձայներ: Սրանից յետոյ Թագաւորի պալատի վրայ երեւաց ոսկէ խարիսխ, որի մեծութիւնը մի մեծ բլրի չափ էր: Այս խարսխի վրայ հրեղէն սիւն կար. սիւնի վրայ ամպեղէն գմբէթ՝ եկեղեցու նման, իսկ գմբէթի վրայ էլ՝ լուսաւոր խաչ:

Ս. Գրիգոր Լուսաւորիչը զարմացած նայում էր և չգիտէր, թէ ինչ նշանակութիւն ունին այս բոլորը: Այդ ժամանակ Աստուծու հրեշտակն իջաւ երկինքից և մեկնեց Ս. Գրիգորին նրա տեսիլը: Հրեշտակն ասաց—այն մարդը, որ ձեռին ոսկէ ուռն ունէր բռնած՝ Աստուծու որդի Յիսուս Քրիստոսն (Միածին) էր. հրեղէն սիւնը՝ Կաթողիկէ եկեղեցին, այսինքն հիմնկուայ իջմիածնի տաճարը, իսկ լուսաւոր



խաչը՝ Հայոց քահանայապետութիւնը, այսինքն կաթողիկոսութիւնն է: Հրեշտակը յայտնեց, որ այս ուռով խփած տեղը եկեղեցի պիտի շինել, որ բոլոր քրիստոնեաների համար աղօթատուն կլինի և բացի դրանից Հայոց կաթողիկոսի աթոռն այդտեղ պիտի հաստատուի, այսինքն Հայոց կաթողիկոսներն այդտեղ պիտի նստեն:

§ 16.

ԷՔՄԻԱԾՆԻ ՏԱՃԱՐԻ ԶԻՆՈՒԹԻՒՆԸ

Միւս օրը Ս. Գրիգորը պատմեց այս տեսիլը Տրդատ թագաւորին, նախարարներին, ժողովրդին և պատուիրեց, որ հրեշտակի ցոյց տրւած տեղը քարէ պարսպով շրջապատեն: Ս. Գրիգորն այդ տեսիլը թագաւորին և նրա նախարարներին մկրտելուց առաջ էր տեսել: Երբ թագաւորական տունը և ժողովրդին մկրտեց, Վաղարշապատ դարձաւ և Յիսուսի՝ Միածնի իջած տեղում ՅՅ թուին մի եկեղեցի շինեց այն ձևով՝ ինչպէս որ տեսել էր: Այս եկեղեցին առաջ Զողովակաթ էր կոչուում \*), որովհետև

\*) Այժմ ևս Զողովակաթ է կոչուում տաճարի աւագ սեղանը, իսկ կաթողիկէի՝ միջնակէտը իջման տեղ, որի վրայ պատարագ է մատուցանուում Էջմիածնայ տօնին և ուրիշ հանգիստաւոր տօներին:

լոյսը, այսինքն շողը այդտեղ կաթեց: Այժմ այլ ևս Զողովակաթ չեն ասում, այլ՝ Էջմիածին, որ նշանակում է թէ այնտեղ իջաւ Միածինը՝ Յիսուս Քրիստոսը: Եկեղեցու շինութեան վրայ աշխատում էին ոչ թէ միայն ժողովուրդը այլև թագաւորն ինքը, Աշխէն թագուհին, թագաւորի որդին, քոյրը, նախարարներն ու իշխանները: Քացի Էջմիածնից Ս. Լուսաւորիչը ուրիշ եկեղեցիներ էլ շինեց—մինը Գայիանէ կոյսի անունով, միւսը Հռիփսիմէի և սրանցում ամփոփեց նրանց մարմինները. իսկ երրորդը՝ Հնձանի տեղում: Հնձանի տեղում շինած եկեղեցին այժմ կոչուում է Զողովակաթ:

Ս. Էջմիածինը ՅՅ թուից սկսած բոլոր Հայերի մայր եկեղեցին է և քահանայապետական աթոռը—այնտեղ է նստում Հայոց կաթողիկոսը:

Էջմիածնի հիմնարկութիւնը մեր եկեղեցին տօնում է Հոգեգալստից երկու շաբաթ յետոյ:

ԶԱՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԷՔՄԻԱԾՆԻ

Է՛ջ Միածինն ի Հօրէ  
Եւ լոյս փառաց ընդ նմա,  
Չայնք հնչեցին  
Սանդարամետք անդնդոց:



Միածինը (Յիսուս) լուսով պատած իջաւ Հօրից  
(Երկնքից), սանդարամետի (դժոխքի) անդնդից ձաշ-  
ներ խուեցան:

Տեսեալ զլոյս

Մեծ հայրապետին Գրիգորի.

Պատմէր ցնծութեամբ

Հաւատացեալ արքային:

Մեծ հայրապետ Գրիգորը լոյսը տեսնելով՝ ուրա-  
խութիւնով պատմում էր հաւատացեալ թագաւորին:

Եկայք շինեսցուք

Սուրբ գիտրանն լուսոյ,

Քանզի ի սմն ծագեաց մեզ լոյս

Ի Հայաստան աշխարհի:

Եկէք լուսոյ սուրբ խորանը (սեղան, եկեղեցի)  
շինենք, որովհետեւ Հայաստան աշխարհի մէջ այստեղ  
լոյս ծագեց մեզ համար:

Բարեխօսութեամբ վերին քո գօրաց,

Միշտ անշարժ պահեա՛ զաթոռ հայկազնեաց:

Քո վերին գօրքերի (հրեշտակների) բարեխօսու-  
թիւնով միշտ անշարժ պահիր հայկազունների աթո-  
ռը (հայոց եկեղեցին՝ Խչմիածինը):

§ 17.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ Ս. ԵԿԵՂԵՅԻՈՅ  
ՀԱՒԱՏՈՅ ՀԱՆԳԱՆԱԿԸ

Հաւատամք ի մի Աստուած ի Հայրն ա-  
մենակալ՝ յարարիչն երկնի և երկրի, երևելաց  
և աներևոյթից:

Եւ ի մի տէր Յիսուս Քրիստոս, որդին Աս-  
տուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ Միածին,  
այսինքն յէութենէ Հօր:

Աստուած յԱստուծոյ, լոյս՝ ի լուսոյ, Աս-  
տուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ՝ ծրնունդ  
և ոչ արարած:

Նոյն ինքն՝ ի բնութենէ Հօր, որով ա-  
մենայն ինչ եղև յերկինս և ի վերայ երկրի,  
երևելիք և աներևոյթք:

Որ յաղագս մեր մարդկան և վասն մե-  
րոյ փրկութեան իջեալ ի յերկնից՝ մարմնացաւ,  
մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ  
սրբոյ կուսէն Հոգւովն սրբով:

Որով էառ զմարմին, զՀոգի և զմիտ և  
զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս և  
ոչ կարծեօք:

Չարչարեալ, խաչեալ, թալեալ, յերրորդ  
աւուր յարուցեալ, երևալ ի յերկինս նովին մարմ-  
նովն, նստաւ ընդ աջմէ Հօր:



Դալոց է նովին մարմնովն և փառօք Հօր ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ Թաղաւորութեան ոչ դոյ վախճան:

Հաւատամք և ի սուրբ Հոգին յանեղն և ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յաւետարանս, որ էջն ի Յորդանան, քարոզեաց զառաքեալն և բնակեցաւ ի սուրբսն:

Հաւատամք և ի միմիայն ընդհանրական և առաքելական եկեղեցի, ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն և ի Թողութիւն մեղաց: Ի յարութիւն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից Հոգւոց և մարմնոց՝ յարքայութիւն երկնից և ի կեանսն յաւիտենականս:

Իսկ որք ասեն էր երբեմն յորժամ ոչ էր Որդի, կամ էր երբեմն յորժամ ոչ էր սուրբ Հոգի կամ թէ յոչէիցն եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զորդին Աստուծոյ և կամ զսուրբ Հոգին և թէ փոփոխելիք են կամ այլալելիք՝ զանպիսիսն նզովէ կաթողիկէ և առաքելական սուրբ եկեղեցի:

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկրպագանելով սրբոյ Երրորդութեան և միոյ աստուածութեան Հօր և Որդւոյ

և Հոգւոյն Սրբոյ ալժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Հաւատում ենք մի Աստուած, ամենակալ Հօրը, երկինքն ու երկիրը, երևելիների և աներևոյթների Ստեղծողին:

(Հաւատում ենք) և մի Տէր Յիսուս Քրիստոս Աստուծու որդուն, որ հայր Աստուածանից է ծնել՝ միածին, այսինքն Հօր էութիւնիցն է:

Աստուած է՝ Աստուածանից, Լոյս է՝ լուսից, ճշմարիտ Աստուած է, ճշմարիտ Աստուծուց ծնած և ոչ թէ ստեղծուած:

Նոյն ինքն Հօր (Աստուծու) բնութիւնիցն է, որով ամեն բան եղաւ երկնքի մէջ և երկրիս վրայ երևելիներն ու աներևոյթները:

Որ մեզ մարդկանցս համար և մեր փրկութեան համար, երկնքիցն իջնելով՝ մարմին առաւ, մարդ եղաւ և ծնաւ կատարեալ կերպով սուրբ կոչս Մարիամից՝ Հոգւով սրբով:

Որով (Ս. Հոգւով) առաւ մարմին, Հոգի և այն ամենն՝ ինչ կայ մարդու մէջ՝ ճշմարտապէս և ոչ թէ կարծիքով:

Չարչարուեցաւ, խաչուեցաւ, Թաղուեցաւ, երրորդ օրը յարութիւն առաւ և նոյն մարմնով երկինք բարձրանալով՝ Հօր աջ կողմը նստաւ:

Պէտք է գալ նոյն մարմնով և Հօր փառքով կենդանիներին ու մեռածներին դատելու համար, որի Թագաւորութեանը վերջ չկայ:

Հաւատում ենք Ս. Հոգուն, որ անեղ (ոչ ոքից չէ եղել) և կատարեալ Աստուած է, որ խօսեց օրի-



նաց և մարգարէների և աւետարանների միջոցով։  
Որ Յորդանան գետն իջաւ՝ Առաքողին (Քրիստոսին  
Աստուածանից ուղարկուածին) քարոզեց և սուրբերի  
մէջ բնակուեցաւ։

Աստուծոյ ենք նաև միմիայն ընդհանրական  
և առաքելական եկեղեցի, մի մկրտութեան, Ապաշ-  
խարութեան, մեղաց քաւութեան ու թողութեան,  
մեռելների չարութեան, հոգիների և մարմինների  
վերջին դատաստանին, երկնքի արքայութեան և յա-  
ւիտենական կեանքին։

Իսկ նրանք, որոնք ասում են՝ թէ կար ժա-  
մանակ, երբ չկար Աստուծուն որդի, կամ ասում են,  
թէ կար ժամանակ, երբ Ս. Հոգին չկար, կամ ասում  
են, թէ Աստուծու որդին կամ Ս. Հոգին ոչնչից գոյա-  
ցած և հօր Աստուծու էութիւնից չեն, այլ ուրիշ  
էութիւնից են եղած, և կամ թէ կարող են փոփո-  
խուիլ և ալլալել։ Այսպիսի հերետիկոսական խօսքեր  
ասողներին նզովում է Կաթողիկէ և Առաքելական  
սուրբ եկեղեցին։

Իսկ մենք փառաւորում ենք յաւիտենից առաջ  
եղողին՝ երկրպագելով Ս. Երրորդութեան և մի Աս-  
տուածութեան—Հօր, Որդու և Ս. Հոգւոյն՝ այժմ,  
միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

#### ՊԱՏԱՐԱՐԻ ԵՐԳԵՐ

Մարմին տէրունական ևւ արինն փրկ-  
չական կայ առաջի. երկնային զօրութիւնքն

յաներեւոյթս երգնն ևւ ասնն անհանգիստ  
ըստըստով—Սուրբ, Սուրբ, Սուրբ տէր զօ-  
րութեանց։

Տէրունական Մարմինը և փրկչական Արինը  
առաջներս դրած է, երկնային զօրքերն (հրեշտակ-  
ները, աներևոյթ կերպով երգում են և ասում  
չարունակ—Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր զօրութեանց։

Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ.  
Որ էնն Աստուած աստ քազմեցաւ:  
Խաղաղութեան ծայն հնչեցաւ,  
Սուրբ ողջունի հրաման տուաւ:  
Եկնդնցիս մի անձն եղել.  
Համբոյրս յօդ լրման տուաւ:  
Թշնամութիւնն հեռացաւ.  
Սէր յընդհանուրս սփռեցաւ:  
Արդ պաշտօնեայք քարծնայ զծայն՝  
Տուք օրհնութիւն ի մի քերան.  
Միասնական աստուածութեան,  
Որում՝ Սրովբէքն սրբաբան։

Քրիստոս մեր մէջ յայտնուեցաւ, որ էն Աստուա-  
ծըն աչտեղ (սեղանի վրայ) բազմեցաւ։ Խաղաղու-  
թեան ծայն լսուեցաւ. սուրբ ողջունի հրաման տրուե-  
ցաւ։ Եկեղեցիս (բոլոր քրիստոնեաների ժողովը) մի  
սիրտ—մի հոգի դարձաւ և տղա ողջունի համբոյրը՝  
միութեան կապ եղաւ։ Թշնամութիւնը հեռացաւ։



Քրիստոսի սէրն ամենիս մէջ տարածուեց: Ուրեմն,  
ո՞վ պաշտօնեաներ, ձաշներդ բարձրացնելով, միաբե-  
րան օրհնութիւն տուէք միասնական Աստուածու-  
թեանը, որին Սրովբէները փառաբանում են:

Գոհանամք զքէն Տէր, որ կերակրեցեր  
զմեզ յանմահական սեղանոյ քոյ՝ բաշխելով  
զմարմին եւ զարիւն ի փրկութիւն աշխարհի  
եւ կեանք անձանց մերոց:

Ջնորհակալ ենք քեզանից, ո՞վ Տէր, որ մեզ կե-  
րակրեցիր քո անմահական սեղանիցը, բաշխելով քո  
Մարմինն ու Երիւնը՝ աշխարհի փրկութեան եւ մեր  
անձին կեանք լինելու համար:

Սուրբ, Սուրբ, Սուրբ Տէր զօրութեանց,  
լի են երկինք եւ երկիր փառօք քո. Օրհնու-  
թիւն ի քարծոմնս, օրհնեալ որ եկիր եւ զա-  
լոցդ ես անուամբ տեսուն: Ո՛վսանա ի  
քարծոմնս:

Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր զօրութեանց, եր-  
կինքն եւ երկիրը լիքն են քո փառքերով: Օրհնու-  
թիւն լինի բարձրումը. օրհնեալ ես որ եկար եւ պի-  
տի զաս Տիրոջ անունով: Ո՛վսանա բարձրումը:



2013

397

0026527

ՀՀ Ազգային գրադարան



NL0026527



0

Арм.  
2-6306/22

Ի՞նչ աշխատութիւններն ստանալ ցանկացողները կարող են զիմել՝ 1) Тифлист: армянскому священнику Сааку Саакянцъ, 2) Կենդրոնական գրադարձատնոց:

| Ս Տ Ո Ր Ի Ն Զ Բ Զ Ա Ն  |                                                  | Ան-<br>կազմ |    | Կազ-<br>մած |    |
|------------------------|--------------------------------------------------|-------------|----|-------------|----|
|                        |                                                  | մ.          | կ. | մ.          | կ. |
| <b>ՈՒՍՈՒՅՉԱՅ ՀԱՄԱՐ</b> |                                                  |             |    |             |    |
| 1.                     | Դատազիրք կրօնի հին-ուխտ . .                      | 1           | 75 | 1           | 95 |
| 2.                     | Դատազիրք կրօնի նոր-ուխտ մ. 1.                    | 1           | —  | 1           | 20 |
| 3.                     | Դատազիրք կրօնի նոր-ուխտ մասն                     |             |    |             |    |
|                        | II. տետր Ա. . . . .                              | —           | 35 | —           | 55 |
| 4.                     | Դատազիրք կրօնի նոր-ուխտ մասն                     |             |    |             |    |
|                        | II. տետր Բ. Գ. . . . .                           | —           | 70 | —           | 90 |
| 5.                     | Մի քանի խօսք հայ կրօնուսույցնե-<br>րին . . . . . | —           | 10 | —           | 22 |
| <b>ԱՇԱԿԵՐՏԱՅ ՀԱՄԱՐ</b> |                                                  |             |    |             |    |
| 6.                     | Սրբազան պատմիւթիւն հին-ուխտ                      |             |    |             |    |
|                        | Է. տիպ V տարի . . . . .                          | —           | 40 | —           | 50 |
| 7.                     | Սրբազան պատմիւթիւն նոր-ուխտ                      |             |    |             |    |
|                        | Է. տիպ IV տարի . . . . .                         | —           | 40 | —           | 50 |
| 8.                     | Դատատետր կրօնի . . . . .                         |             |    |             |    |
|                        | Է. տիպ III տարի . . . . .                        | —           | 30 | —           | 40 |
| 9.                     | Դատատետր կրօնի . . . . .                         |             |    |             |    |
|                        | Զ. տիպ II տարի . . . . .                         | —           | 20 | —           | 30 |
| 10.                    | Դատատետր կրօնի . . . . .                         |             |    |             |    |
|                        | Է. տիպ I տարի . . . . .                          | —           | 15 | —           | 25 |

Ճանապարհածախար ինձ վրայ չէ:  
Ինձ գիմողները կստանան 20% զիջումն:

11795  
93